Հավելված N 2
ՀՀ կառավարության 2024 թվականի
օգոստոսի 29-ի N 1380 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՆԴԻԿԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետություն սնդիկի ներմուծման հետ կապված հարաբերությունները:

2. «Սնդիկի մասին» օրենքով սահմանված հասկացությունները սույն կարգում օգտագործվում են նույն իմաստով:

3.Հայաստանի Հանրապետության տարածք սնդիկի ներմուծումը թույլատրվում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ լիազոր մարմին) կողմից տրամադրված սնդիկի ներմուծման միանգամյա (մեկանգամյա) լիցենզիայի առկայության դեպքում:

4.Միանգամյա լիցենզիա ստանալու համար սնդիկ ներմուծող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը լիազոր մարմին են ներկայացնում «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» էլեկտրոնային հարթակում (www.trade.gov.am) հասանելի «Թույլատվական փաստաթղթեր (sw.gov.am)» համակարգի միջոցով ձևավորված էլեկտրոնային հայտ:

5. Սնդիկի ներմուծման միանգամյա լիցենզիայի ձևակերպման համար, բացի Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1524-Ն որոշման N 4 հավելվածի 12-րդ կետով և 2015 թվականի փետրվարի 5-ի N 90-Ն որոշման 2-րդ կետի 9-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերից և տեղեկություններից, հայտատուն «Թույլատվական փաստաթղթեր» համակարգի միջոցով ձևավորված հայտին կից լիազոր մարմին է ներկայացնում «PDF» ձևաչափով թվայնացված հետևյալ փաստաթղթերը՝

1) «Սնդիկի վերաբերյալ» կոնվենցիայի կողմ չհանդիսացող երկրի հավաստող գրությունն առ այն, որ այդ երկրից արտահանվող սնդիկը չի հանդիսանում

«Սնդիկի վերաբերյալ» կոնվենցիայով անթույլատրելի ճանաչված աղբյուրներից՝ սնդիկի հիմնական արդյունահանումից կամ քլոր-ալկալիական արտադրության կայանքների ապամոնտաժումից առաջացած սնդիկ.

2) ավտոմոբիլային տրանսպորտով սնդիկի փոխադրման դեպքում «Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ և չվնասազերծված տարաներ փոխադրելու մասին» օրենքով սահմանված կարգով տրամադրված վտանգավոր բեռներ փոխադրելու թույլտվությունը.

3)երկաթուղային տրանսպորտով սնդիկի փոխադրման դեպքում բեռնառաքիչ (բեռնափոխադրող) կազմակերպության ղեկավարի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 30-ի N 892-Ն որոշմամբ սահմանված կարգով ստորագրված և հաստատված վտանգավոր բեռի բնութագիրը.

4) օդային տրանսպորտով սնդիկի փոխադրման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի N 1372-Ն որոշմամբ սահմանված՝ դեպի Հայաստանի Հանրապետություն կամ Հայաստանի Հանրապետությունից դեպի դուրս վտանգավոր բեռների օդային փոխադրումների համապատասխան թույլտվությունը:

6. Սույն կարգի 5-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված փաստաթուղթը կամ փաստաթղթերն ստանալու համար իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը գրավոր դիմում են արտահանող երկրի արդյունաբերության (հանքարդյունաբերություն, քիմիական արդյունաբերություն) և թափոնների կառավարման ոլորտներում լիազորված մարմիններին մինչև տվյալ երկրից սնդիկի արտահանման գործընթաց սկսելը:

7. Սնդիկի ներմուծման միանգամյա լիցենզիան տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1524-Ն որոշման N 4 հավելվածով սահմանված դրույթներին համապատասխան:

8. Սնդիկի ներմուծման միանգամյա լիցենզիան ձևակերպվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 90-Ն որոշման N 9 հավելվածի Զև N 9 և Զև N 10 ձևանմուշներին համապատասխան:

9. Ֆիզիկական անձանց (բացառությամբ «Մնդիկի մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված անհատ ձեռնարկատերերի) կողմից Հայաստանի Հանրապետության տարածք սնդիկի ներմուծումը, որպես անձնական օգտագործման ապրանք, արգելվում է:

10. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1524-Ն որոշման N 4 հավելվածի 14-րդ կամ սույն կարգի 9-րդ կետերով սահմանված հիմքերի առկայության դեպքում լիազոր մարմինը սույն կարգի 5-րդ կետով սահմանված փաստաթղթերն ստանալու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է հայտը մերժելու մասին որոշում՝ նշելով մերժման հիմքերը:

11. Մաքսային մարմինը «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով սնդիկի ձևակերպումն իրականացնում է լիազոր մարմնի կողմից՝ սույն կարգի 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 90-Ն որոշման 2-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված, «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» էլեկտրոնային հարթակի միջոցով տրամադրված միանգամյա լիցենզիայի առկայության դեպքում:

12. Մնդիկի նկատմամբ չեն կիրառվում «Հրաժարում՝ հօգուտ պետության», «Ժամանակավոր ներմուծում», «Մաքսային պահեստ», «Անմաքս առևտուր», «Ոչնչացում», «Վերամշակում մաքսային տարածքում», «Ներքին սպառման համար վերամշակում», «Ազատ մաքսային գոտի», «Ազատ պահեստ», «Վերաներմուծում» մաքսային ընթացակարգերը:

13. Լիազոր մարմինը սնդիկի ներմուծման միանգամյա լիցենզիա տրամադրելուց կամ հայտը մերժելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր ծանուցում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանը, Հայաստանի Հանրապետության պետական

եկամուտների կոմիտեին, Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին, Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնին, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

29.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ